Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 7. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և (կամ) հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերով:

Ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքները ձևակերպվում են գրավոր և հաշվառվում անձնական գործում:

2. Խրախուսանքները կիրառելու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց ցանկը, խրախուսանքների կիրառման սահմանները, կարգը և պայմանները սահմանվում են ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի~~ոստիկանության պետի~~ նորմատիվ հրամանով:

Հոդված 8. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով:

2. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր և հաշվառվում անձնական գործում:

(նախադասությունը հանվել է 15.11.10 ՀՕ-170-Ն)

3. Կարգապահական տույժի ենթարկված ոստիկանության ծառայողը չի ազատվում քրեական պատասխանատվությունից, եթե նա, կարգապահական խախտումից բացի, կատարել է քրեորեն հետապնդելի արարք: Ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական պատասխանատվությունից ~~կամ պատժից~~ ազատված ոստիկանության ծառայողները կարող են տվյալ արարքի համար ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

4. Ոստիկանության ծառայողի նկատմամբ ղեկավարի (հրամանատարի) իրավունքների սահմաններից դուրս կարգապահական տույժ կիրառելու համար նա միջնորդում է այդ իրավունքն ունեցող վերադաս ղեկավարին (հրամանատարին):

5. ***(պարբերությունն ուժը կորցրել է 24.10.06 ՀՕ-170-Ն)***

Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը վերապահվում է նրանց պաշտոնի նշանակելու լիազորություն ունեցող անձին, իսկ ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը՝ Ոստիկանության պետին: Այլ պաշտոնատար անձանց կողմից կարգապահական տույժեր կիրառելու իրավունքը

պատվիրակում է կարգապահական տույժեր կիրառելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը՝ իր հրամանով, որով սահմանվում են նաև կարգապահական տույժերի կիրառման սահմանները:~~Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը կիրառելու իրավունքը վերապահվում է ոստիկանության պետին: Ոստիկանության այլ պաշտոնատար անձանց կարգապահական տույժեր կիրառելու իրավունքը պատվիրակում է ոստիկանության պետը՝ իր հրամանով, որով սահմանվում են նաև կարգապահական տույժերի կիրառման սահմանները:~~

Հոդված 9. Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ խրախուսանքներ կիրառելու և նրանց կարգապահական տույժի ենթարկելու առանձնահատկությունները

1. Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված խրախուսանքները, ինչպես նաև նույն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են գրավոր հրամանով: Խրախուսանքները սովորողների նկատմամբ կիրառվում են ոստիկանության ուսումնական հաստատության միջին, ավագ կամ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի զեկուցագրի հիման վրա, իսկ կարգապահական տույժերը՝ նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող սովորողի բացատրության հիման վրա:

2. Հասարակական կարգի պահպանության միջոցառումներին մասնակցելու ընթացքում թույլ տված կարգապահական խախտումների համար սովորողների նկատմամբ կիրառված կարգապահական տույժերը և բարեխիղճ ծառայության համար հայտարարված խրախուսանքները հաշվառվում են սովորողի անձնական գործում, իսկ ոստիկանության ուսումնական հաստատության ներքին կանոնակարգի խախտման համար կիրառված կարգապահական տույժերը՝ սովորողի անձնական գործին կցվող «Սովորողի ծառայողական քարտում»:

3. Ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ~~Ոստիկանության~~ ուսումնական հաստատությունն ավարտելուց և համապատասխան պաշտոնի նշանակվելուց հետո ծառայության ողջ ընթացքում «Սովորողի ծառայողական քարտում» գրանցված կարգապահական տույժերը չեն հաշվարկվում:

Հոդված 10. Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները

1. Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները ոստիկանության ծառայողի համար պարտադիր են ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս:

2. Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված՝ ոստիկանության ծառայողի վարվելակերպի (վարքագծի) և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են (այսուհետ՝ վարքագծի կանոններ):

3. Վարքագծի կանոնների նպատակն է ուղղորդել ոստիկանության ծառայողին վերջինիս վարվելակերպի առումով, ինչպես նաև իրազեկել քաղաքացիներին, թե ինչպիսի պահվածք պետք է ակնկալել ոստիկանության ծառայողից:

4. Ոստիկանության ծառայողը պարտավոր է՝

ա) հավատարիմ լինել երդմանը, ցուցաբերել անմնացորդ նվիրվածություն Հայաստանի Հանրապետությանը, հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և պետական լեզուն.

բ) հարգել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, ժողովրդի սովորույթներն ու ավանդույթները.

գ) նյութապես կամ այլ միջոցներով, այդ թվում՝ հրապարակային ելույթներով կամ ծառայողական պարտականությունները կատարելիս քննարկումների ժամանակ, չսատարել որևէ քաղաքական կուսակցության.

դ) ցանկացած իրավիճակում պահպանել անձնական արժանապատվությունը, բարձր պահել պատիվը, լինել ազնիվ.

ե) օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս զերծ մնալ հասարակական կարծիքի ազդեցությունից և իր գործողությունների համար քննադատվելու մտավախությունից.

զ) հանուն անձնական կամ այլ անձանց շահերի չնսեմացնել ոստիկանության և ոստիկանության ծառայողի վարկը.

է) աջակցել իր ղեկավարներին կարգապահության ամրապնդման հարցերում, հարգանքով վերաբերվել նրանց և կոչումով ավագներին.

ը) կատարելագործել սեփական մասնագիտական որակները, ունենալ պատշաճ իրավագիտակցություն և իրավական կուլտուրա.

թ) իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների նկատմամբ.

ժ) ձեռնպահ մնալ ֆինանսական, գործնական, անձնական այնպիսի կապերի հաստատումից, որոնք կարող են խախտել նրա անաչառությունը, խոչընդոտել ծառայողական պարտականությունների պատշաճ կատարմանը.

ժա) անհարկի չընդգծել իր պաշտոնեական դիրքը.

ժբ) իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանն ու պահպանմանը, որ ոստիկանությունում ծառայությունը հիմնված է անկողմնակալության, ազնվության և օրինականության սկզբունքների վրա.

ժգ) հասարակության և պետության շահերը բարձր դասել անձնականից, անմնացորդ նվիրվել աշխատանքին.

ժդ) խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքն ու կարևորությունը, տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները.

ժե) ղեկավարվել պատվի, խղճի և արժանապատվության զգացումներով.

ժզ) աջակցել օգնության կարիք ունեցող անձանց, հատկապես ծերերին, երեխաներին, հաշմանդամներին:

5. Վարքագծի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը: Եթե ոստիկանության ծառայողը չի կողմնորոշվում՝ ինչպիսի վարքագիծ դրսևորել որոշակի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի անմիջական ղեկավարին: Ոստիկանության ծառայողի անմիջական ղեկավարը հնարավորության սահմաններում միջոցներ է ձեռնարկում, որպեսզի իր ենթակա ծառայողների համար դյուրին լինի վարքագծի սույն կանոնների պահպանումը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի «ա», «գ», «է», «թ» և «ժ» կետերով սահմանված կանոնների խախտումը կարող է առաջ բերել կարգապահական պատասխանատվություն:

7. ***(մասն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-36-Ն)***

8. ***(մասն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-36-Ն)***

~~Հոդված 43.1. Որոշումների ընդունումը կարգապահական հանձնաժողովի կողմից~~

~~1. Կարգապահական կոպիտ խախտումների առիթով իրականացված ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը մինչև համապատասխան որոշում ընդունելու համար ծառայողական քննություն նշանակող անձին ներկայացնելը քննության են առնվում ոստիկանության կարգապահական հանձնաժողովում:~~

~~2. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովը կաշկանդված չէ ծառայողական քննության նյութերով և կարող է ծառայողական քննություն իրականացնող անձից սեփական նախաձեռնությամբ պահանջել լրացուցիչ մեղադրական փաստական տվյալներ, ինչպես նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կոչին լսել այլ անձանց բացատրությունները, հետազոտել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի՝ լրացուցիչ ներկայացրած փաստական տվյալները:~~

~~3. Կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողը, ինչպես նաև նրա ղեկավարներն ունեն ոստիկանության կարգապահական հանձնաժողովում լսվելու իրավունք:~~

~~4. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովը պարտավոր է պարզել հետևյալ փաստական հանգամանքները.~~

~~ա) ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ոստիկանության ծառայողը.~~

~~բ) այդ արարքը համապատասխանում է արդյոք «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգապահական կոպիտ խախտումների հատկանիշներին.~~

~~գ) ապացուցված է արդյոք ոստիկանության ծառայողի կողմից այդ արարքը կատարելը.~~

~~դ) ապացուցված է արդյոք ոստիկանության ծառայողի մեղավորությունը տվյալ կարգապահական խախտումը կատարելու մեջ.~~

~~ե) ինչ կարգապահական տույժ պետք է նշանակվի կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի նկատմամբ:~~

~~5. Պարզված փաստական հանգամանքների հիման վրա ոստիկանության կարգապահական հանձնաժողովը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~ա) միջնորդել ոստիկանության պետին՝ ոստիկանության ծառայողին ենթարկելու կարգապահական պատասխանատվության.~~

~~բ) ազատել կարգապահական պատասխանատվությունից, եթե առկա են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հանգամանքները.~~

~~գ) միջնորդել ոստիկանության պետին՝ դադարեցնելու ծառայողական քննությունը, եթե առկա են սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերով նախատեսված հանգամանքները:~~

~~6. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում, բացի ոստիկանության ծառայողներից, ընդգրկվում են նաև պետական այլ մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Ընդ որում, ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկված ոստիկանության ծառայողների թիվը չի կարող գերազանցել ոստիկանության կարգապահական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսը:~~

~~7. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կողմից կայացվող որոշումները հրապարակային են:~~

~~8. Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~